- 7.2. Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 7.3. Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
- 7.4. Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
- 7.5. Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 7.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6. Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության Պայմանագրի կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության Պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում⁸:

⁸ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

- 9.7. Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) Պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած Պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները⁹:
- 9.8. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:
- 9.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
- Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:
- 9.10. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
- 9.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 9.12. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Հավելվածներ N^o 1; 2; 3; 4 և 4.1-ը, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 9.13. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007854

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար

Խ.Աղաբեկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ

ՀՎՀՀ

(ստորագրություն)

Կ.Տ.

⁹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

ԳՆՈՐԴ

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007854

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության

աշխատակազմի ղեկավար

Խ.Աղաբեկյան

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ _____

ՀՎՀՀ _____

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական տղամարդ տեսուչի ձմեռային համազգեստ (ընդհանուր նկարագիրը)
1.2. Գնման առարկայի նկարագիրը	Գլխարկ ձմեռային. Մահուդից, բաղկացած է թասակից, ականջակալներից և ճակատային մասից (հովհար): Ականջակալները և հովհարը մշակված են արհեստական մորթուց: Թասակը չորստապականի է, հովհարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան (նկար 1): Կիսավերարկու՝ ձմեռային. Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, տաք ներդիրով, կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի ներքևի մասում մեծ վրադիր կափյուրներով գրպաններ, իսկ վերևի մասում՝ թեք ներկարված փոքր գրպաններ: Աստաղը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիսավերարկուի ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 1): Տաբատ՝ ձմեռային. Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, տաք ներդիրով, ուղիղ ուրվագծով, գոտին՝ գոտեմակօղերով, մետաքսե աստաղով, կոճկվում է կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները՝ ուղիղ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով գրպան (նկար 1): Վերնաշապիկը. Բաց կանաչ գույնի բրդյա կտորից, ծալովի օձիքով, ձախ կրծքամասում կոճակով կոճկվող արտաքին գրպան, կոճկվում է 8 կոճակներով: Թևերը երկար, ուղիղ թևքածալերով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 1): Բաճկոն՝ ձմեռային. Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, միափեշ, միակողմ 4 ոսկեգույն կոճակով, հետծալված օձիքով: Կրծքամասի 2 կողմում տեղադրված են ներկարված շերտակարերով, իսկ փեշերի ներքևի մասում՝ վրադիր գրպաններ, կափյուրներով: Աստաղը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 2): Կիսաճտրավոր կոշիկ՝ ձմեռային. Սև գույնի կաշվից, տաք, բնական մորթուց (ոչխարի) ներդիրով: Ներբանները ռելիեֆային, կոճկվում է շղթայով (նկար 1):


2.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական տղամարդ տեսուչի ամառային համազգեստ (ընդհանուր նկարագիրը)
2.2. Գնման առարկայի նկարագիրը	• <u>Գլխարկը.</u> Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, դարչնագույն երիզով և գլխարկաբուխով: Կազմված է սև, լաքապատ գլխարկահովիարից և գլխարկաբուխից: Գլխարկաբուխը դարչնագույն է՝ 2մմ լայնքով կարմիր մահուդից կարված երիզով: Գլխարկի կենտրոնում ամրացվում է գլխարկանշան: Գլխարկահովիարը սև է, լաքապատ (նկար 2): • <u>Տաքատ զարնանային-աշնանային.</u> Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները ուղիղ: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան (նկար 2): • <u>Վերնաշապիկը.</u> Բաց կանաչ բամբակյա կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում կոճակով կոճկվող կափույրով գրպան, կոճկվում է 8 կոճակով, թևքերը կարճ, ուղիղ թևքածալով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 2): • <u>Բաճկոն զարնանային-աշնանային.</u> Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, ուղիղ ուրվագծով, կոճկվում է 4 կոճակով: Օձիքը ծալովի, լանջափեշերի ներքևի մասերում վրադիր կափույրներով գրպաններ, իսկ վերևի մասում թեք ներկարված փոքր գրպաններով: Աստառը մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 2): • <u>Կոշիկ զարնանային-աշնանային..</u> Սև կամ մուգ դարչնագույն կաշվից, երեսամասը ամբողջական առաջամասով (նկար 2):
3.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական կին տեսուչի ձմեռային համազգեստ (ընդհանուր նկարագիրը)
3.2. Գնման առարկայի նկարագիրը	• <u>Գլխարկ ձմեռային.</u> Մահուդից, բաղկացած է թասակից, ականջակալներից և ճակատային մասից (հովիար): Ականջակալները և հովիարը մշակված են արհեստական մորթուց: Թասակը չորստապականի է, հավիարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան (նկար 3): • <u>Կիսավերարկու՝ ձմեռային.</u> Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, հանովի մորթե օձիքով, ուղիղ ուրվագծով և տաք ներդիրով: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի ներքևի մասերում՝ մեծ, վրադիր գրպաններ, վերևի մասում՝ թեք ներկարված փոքր գրպաններ: Աստառը՝ մետաքսից, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիսավերարկուի ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 3): • <u>Կիսաշոջազգեստ՝ ձմեռային.</u> Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, ուղիղ կտրվածքով, երկկողմանի սեղմոններով, հետևամասում կափույրով ճեղքվածքով: Աստառը՝ մետաքսից: Ձախ կողմից կոճկվում է շղթայով (նկար 3): • <u>Վերնաշապիկ՝ երկարաթև.</u> Սպիտակ մետաքսե կտորից, ծալովի օձիքով, կրծքամասերում սեղմոններով, կոճկվում է կափույրով ծածկված 8 կոճակներով: Թևքերը երկար, ուղիղ թևքածալերով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 4): • <u>Բաճկոն՝ ձմեռային.</u> Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, միափեշ, միակողմ 3 ոսկեգույն կոճակով, վրադիր օձիքով: Կրծքամասը՝ սեղմոններով, փեշերի ներքևի մասերում՝ ներկարվող, կափույրով թեք գրպաններ: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 4): • <u>Կիսաճութավոր կոշիկ՝ ձմեռային.</u> Սև գույնի բնական կաշվից: Երեսամասը՝ ամբողջական կամ կտրված քթամասով, երկարացված ձևավոր հետևամասերով, կրունկը՝ մինչև 5,5 սմ բարձրության: Լեզվակը միացված է առաջամասին (նկար 3):
4.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական կին տեսուչի ամառային համազգեստ (ընդհանուր նկարագիրը)
4.2. Գնման առարկայի նկարագիրը	• <u>Կիսաշոջազգեստ՝ զարնանային-աշնանային.</u> Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, ուղիղ կտրվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով: Գոտին՝ գոտեմակողերով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով (նկար 4):

	• <u>Վերնաշապիկ՝ կարճաթև.</u> Սպիտակ մետաքսից, օձիքը՝ հետ ծալված, կրծքամասերում սեղմոններով, կոճկվում է կափուրով ծածկված 8 կոճակներով, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 4): • <u>Բաճկոն՝ գարնանային-աշնանային.</u> Մուգ կանաչ գույնի արհեստական կտորից, միափեշ, միակողմ 3 ոսկեգույն կոճակով, վրադիր օձիքով: Կրծքամասը՝ սեղմոններով, փեշերի ներքևի մասերում՝ ներկարվող, կափուրով թեք գրպաններ: Աստաղը՝ մետաքսե, ձախ կողմում ունի ծոցագրպան, ձախ թևքի վերևի մասում կտորի վրա կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 4): • <u>Կոշիկ գարնանային-աշնանային.</u> Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական, հետևամասի և առաջամասի հետ ծալված եզրերով: Ներքանը ձևավորված է պոլիուրեթանից՝ սոսնձով միացման մեթոդով: Կրունկը՝ մինչև 5 սմ բարձրության, փաթաթված երեսամասի նյութով (նկար 4):
5.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային դաշտային համազգեստ (ընդհանուր նկարագիրը)
5.2. Գնման առարկայի նկարագիրը	• <u>Գլխարկը.</u> Մահուդից, բաղկացած է թասակից, ականջակալներից և ճակատային մասից (հովհար): Ականջակալները և հովհարը մշակված են արհեստական մորթուց: Թասակը չորստապականի է, հովհարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը (նկար 5, 7): • <u>Բաճկոնը.</u> Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, միափեշ, տաք ներդիրով, աստաղը՝ մետաքսե, հետծալված, օձիքով, հանովի՝ ոչխարի գորշ գույնի մորթուց վրադիրով, երկու կողային ներկարված գրպաններով, մեկ ծոցագրպանով: Ձախ թևքի վերևի մասում կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը: Բաճկոնի առջևի մասում տեղադրված է շղթա՝ երկու կոճգամով և կաչուն կոճկվածքով (նկար 5, 7): • <u>Տաքատը.</u> Մուգ կանաչ գույնի բրդյա կտորից, ուղիղ կարվածքով՝ տաք միջնադիրով, երկու կողային գրպանով և առջևի մասում տեղադրված է շղթա (նկար 5, 7): • <u>Կիսաճտկավոր կոշիկ՝ ձմեռային.</u> Սև գույնի բնական կաշվից, միջնադիրը՝ բնական մորթուց, երեսամասից կապվում է քուղերով կամ կոճկվում է շղթայով, ներքանները՝ ռեյիեֆային (նկար 5, 7):
6.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական տեսուչի ամառային դաշտային համազգեստ (ընդհանուր նկարագիրը)
6.2. Գնման առարկայի նկարագիրը	• <u>Գլխարկը (կեպի).</u> Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, բամբակյա գործվածքից, ճակատային մասի կենտրոնում ամրացված է գլխարկանշանը (նկար 6; 8): • <u>Բաճկոնը.</u> Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, միափեշ, հետծալված օձիքով, բաճկոնի առջևի մասում տեղադրված է շղթա՝ երկու կոճգամով և կաչուն կոճկվածքով, կրծքավանդակին երկու վրադիր գրպան՝ կափուրներով և կոճգամներով, երկու ներկարված կողային գրպանով: Ձախ թևքի վերևի մասում կարված է բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (նկար 6; 8): • <u>Տաքատը.</u> Մուգ կանաչ գույնի բամբակյա կտորից, ուղիղ կարվածքով՝ երկու կողային գրպանով և հետևի մասում՝ մեկ գրպանով, առջևի մասում տեղադրված է շղթա (նկար 6; 8): • <u>Կիսաճտկավոր կոշիկ.</u> Սև բնական կաշվից, միջնադիրը՝ բլազ կամ համարժեքը, երեսամասից կապվում է քուղերով կամ կոճկվում է շղթայով, ներքանները՝ ռեյիեֆային:
7.1. Գնման առարկայի անվանումը	Համասեզոնային պարագաներ (ընդհանուր նկարագիրը)
7.2. Գնման առարկայի նկարագիրը	• <u>Փողկապ.</u> Սև գույնի կտորից, ունի լայնացած ուրվագծով ձեւվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքեում՝ սուր անկյունով, վերեւում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով եւ ամրակով (նկար 1, 2, 4): • <u>Կաշվե գոտի.</u> Բնական կաշվից՝ 50մմ լայնությամբ, երկանցք, մետաղյա ճարմանդով և զենքի համար նախատեսված պատյանով (նկար 5, 6, 7, 8):

7.3. Գնման առարկայի չափերը և քանակները	• Փողկապ. Մեկ լրակազմի համար 1 հատ • Կաշվե գոտի. Մեկ լրակազմի համար 1 հատ
8.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանը (ընդհանուր նկարագիրը)
8.2. Գնման առարկայի նկարագիրը	Կտորի հիմքի վրա ասեղնագործած կամ համարժեքը: Տարբերանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշմ՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մզացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում 10մմ ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ» բառերը (նկար 9):
8.3. Գնման առարկայի չափերը և քանակները	Բնապահպանական պետական տեսչության տարբերանշանն ունի 90մմ բարձրությամբ և 65մմ լայնությամբ վահանի տեսք, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի ծախ թևքին (նկար 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8): • Մեկ լրակազմի համար 8 հատ
9.1. Գնման առարկայի անվանումը	Բնապահպանական պետական տեսուչի գլխարկանշանը (ընդհանուր նկարագիրը)
9.2. Գնման առարկայի նկարագիրը	Մետաղյա ծուլվածքից կամ պլաստմասայից: Գլխարկանշանի կենտրոնում, երկրագնդի քարտեզի ուրվագծի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական դրոշմ՝ տերևի տեսքով: Տերևի վրա Հայաստանի Հանրապետության ոսկե-դեղնավուն քարտեզն է՝ Սևանա լճի երկնագույն, ընդգծված պատկերով: Երկրագնդի շրջանակի գույնը վերևից երկնքի կապույտից փոխվում է մինչև կանաչի՝ ներքևում: Շրջանակը ներառված է կապույտ՝ շեղակի մզացված շերտերով վահանի մեջ: Երկրագնդի շրջանակի վերևի աջ անկյունում արեգակի պատկերն է լուսափնջերով, որոնք շարունակվում են մինչև վահանի վերևի ծայրերը: Վահանի եզրագծում ոսկեգույն տառերով գրված է «ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» իսկ երկրագնդի ուրվագծի ներքևի մասում «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ» բառերը (նկար 10):
9.3. Գնման առարկայի չափերը և քանակները	Բնապահպանական պետական տեսչության գլխարկանշանը ունի 40մմ բարձրությամբ և 29մմ լայնությամբ վահանի տեսք (տարբերանշանի փոքր տեսքով), ամրացվում է գլխարկի առաջնային մասի կենտրոնում (նկար 1, 2, 3, 5, 6, 7, 8): • Մեկ լրակազմի համար 4 հատ
10. Մատակարարին ներկայացվող պահանջները	Արտահագուստի կարումը անհատական պատվերի սկզբունքով՝ չափագրումը պատվիրատուի գրասենյակում և տարածքային բաժիններում
11. Ընդհանուր թվաքանակները	1. Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային համազգեստ 1.1. Գլխարկ ձմեռային - 60 հատ 1.2. Կիսավերարկու՝ ձմեռային - 60 հատ 1.3. Վերնաշապիկ երկարաթև - 60 հատ 1.4. Կիսաճտքավոր կոշիկ՝ ձմեռային - 60 հատ 2. Բնապահպանական պետական տեսուչի ամառային համազգեստ 2.1. Գլխարկ - 60 հատ 2.2. Տաքատ գարնանային-աշնանային - 60 հատ 2.3. Վերնաշապիկ կարճաթև - 60 հատ 2.4. Բաճկոն գարնանային-աշնանային - 60 հատ 2.5. Կոշիկ գարնանային-աշնանային - 60 հատ 3. Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային դաշտային համազգեստ 3.1. Գլխարկ ականջակալ - 60 հատ 3.2. Բաճկոն - 60 հատ 3.3. Տաքատ - 60 հատ 3.4. Կիսաճտկավոր կոշիկ՝ ձմեռային - 60 հատ 4. Բնապահպանական պետական տեսուչի ամառային դաշտային համազգեստ 4.1. Գլխարկը (կեպի) - 60 հատ

	4.2. Բաճկոն - 60 հատ 4.3. Տաբատ - 60 հատ 4.4. Կոշիկ - 60 հատ 5. Համասեզոնային պարագաներ 5.1. Փողկապ - 60 հատ 5.2. Կաշվե գոտի - 60 հատ 5.3. Բնապահպանական պետական տեսչության տարբերանշան - 480 հատ 5.4. Բնապահպանական պետական տեսուչի գլխարկանշան - 180 հատ
12. Մատակարարումը	ք.Երևան, Կառավարական շենք 3, պատվիրատուի պահեստ

Բնապահպանական պետական տղամարդ տեսուչի ձմեռային համազգեստ
նկար 1



Բնապահպանական պետական տղամարդ տեսուչի ամառային համազգեստ
նկար 2



Բնապահպանական պետական կին տեսուչի ձմեռային համազգեստ
նկար 3



Բնապահպանական պետական կին տեսուչի ամառային համազգեստ
նկար 4



Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային դաշտային համազգեստ
նկար 5



Բնապահպանական պետական տեսուչի ամառային դաշտային համազգեստ
նկար 6







Տարբերանշան (թևի համար)
 նկար 9



Գլխարկանշան
 նկար 10

ԳՆՈՐԴ**ՀՀ բնապահպանության նախարարություն**ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007854

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար**Խ.Աղաբեկյան**

(ստորագրություն)

Կ.Տ.**ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ

ՀՎՀՀ

(ստորագրություն)

Կ.Տ.**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

(հազար դրամ)

h/h	Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը	Զախման միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է գնել 2016 թվականին								Ընդամենը	
				1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսուչների համագգեստ	լրակազմ		-	-	60		-	-	-	-	60	
2	Կիսաճտքավոր կոշիկ՝ ծմեռային տոնական	զույգ		-	-	60		-	-	-	-	60	
3	Կոշիկ գարնանային- աշնանային տոնական	զույգ		-	-	60		-	-	-	-	60	
4	Կիսաճտկավոր կոշիկ՝ ծմեռային դաշտային	զույգ		-	-	60		-	-	-	-	60	
5	Կոշիկ դաշտային	զույգ		-	-	60		-	-	-	-	60	
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը			-	-			-	-	-	-		

ԳՆՈՐԴ

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007854

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության
 աշխատակազմի ղեկավար

Խ.Աղաբեկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ

ՀՎՀՀ

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

h/ h	Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝(ըստ ամիսների աճողական կարգով)												Ընդա-մենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսուչների համազգեստ	-	-	-	13.8%	13.8%	13.8%	42.0%	42.0%	42.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
2.	Կիսաճտքավոր կոշիկի՝ ձմեռային տոնական	-	-	-	13.8%	13.8%	13.8%	42.0%	42.0%	42.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
3.	Կոշիկ գարնանային-աշնանային տոնական	-	-	-	13.8%	13.8%	13.8%	42.0%	42.0%	42.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
4.	Կիսաճտկավոր կոշիկ՝ ձմեռային դաշտային	-	-	-	13.8%	13.8%	13.8%	42.0%	42.0%	42.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
5.	Կոշիկ դաշտային	-	-	-	13.8%	13.8%	13.8%	42.0%	42.0%	42.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		-	-	-	13.8%	13.8%	13.8%	42.0%	42.0%	42.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007854

ՀՎՀՀ 02507198

ՀՀ

ՀՎՀՀ

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«_____» «_____» 2016թ.

Պայմանագրի անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 2016թ.

Պայմանագրի համարը՝ № **ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)**

Պատվիրատուն՝ ի դեմս **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության ֆինանսահաշվապահական և տնտեսական բաժնի պետ Լ.Սինանյանի**, և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «_____» _____ի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 2016թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	
	Ընդամենը						

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-Ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «_____» _____-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «_____» «_____» 2016 թվականին կնքված № ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07) գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը «_____» «_____» 2016 թվականին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ստորագրություն

ազգանուն, անուն

**«ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման»
կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016 թվականի «_____» «___»-ի N «___» որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցները՝

N	Մասնակցի		
	անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

Ինչդրում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների՝ նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

«ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)» ծածկագրով գնահատող
հանձնաժողովի քարտուղար Լ.Զոհրաբյան _____
ստորագրություն

«___» «_____» 2016թ.

«ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի
47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պատվիրա տուի անվանումը	Մասնակցի								
		անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ի գումարի չափը/ՀՀ դրամ	հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ				հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավելշտային արժեքը/ՀՀ դրամ	
									ակտիվներ	պարտավորություն
					20..թ.	20..թ.	20..թ.	Ընդամե նը		

Եզրակացությունը տրվել _____ վարչության աշխատակից _____-ի կողմից

պաշտոնյայի անունը, ազգանունը

ստորագրություն

**«ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)»
ք.Երևան «___» «_____» 2016թ.

-ն ի դեմս Ընկերության տնօրեն՝ _____

Ընկերության անվանումը

Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Հանդերձանքի» ձեռքբերման «ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)» ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՈԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը

Ընկերության հասցեն

Ընկերության բանկի անվանումը

Ընկերության Հ/Հ

Ընկերության ՀՎՀՀ

տնօրեն՝ _____

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N __ «__» «_____» 2016թ.		
Վճարող՝ «_____» _____	ԴԵԲԵՏ	ԳՈՒՄԱՐ (ԱՐԺՈՒՅԹԸ) _____ ՀՀ դրամ
ՀՎՀՀ _____		
Վճարողի բանկը՝ «_____» _____	ՀՀ _____	
Շահառու՝ ՀՀ բնապահպանության նախարարություն	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՈՒԵՐՈՎ)
ՀՎՀՀ 02507198		
Շահառուի բանկը՝ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՀ 900011007854	
Գումարը բառերով՝ _____		
Գնման գործընթացի ծածկագիրը «ՇՀԱՊՁԲ-15/10 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/07)»		
Վճարման նպատակը՝ _____ ապահովում		
Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը Կից _____ էջ		
Շահառուի ստորագրությունները / _____ / / _____ / Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները / _____ / / _____ / Կ.Տ.	
Կատարված է շահառուի բանկի կողմից / _____ / «_____» «_____» 2016թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից / _____ / «_____» «_____» 2016թ. Կ.Տ.	

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

Դաշտի համար	«Վճարման պահանջագրի» փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի/վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը
1	2	3	4
1.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր
2.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր, լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը
3.	վճարող	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:
4.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը	պարտադիր	պարտադիր
5.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը:
6.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու
7.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ
8.	շահառու	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ

			անհրաժեշտության:
9.	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու:
10.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը	պարտադիր	պարտադիր
11.	շահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները:
12.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը
13.	արժույթը (բառերով և/կամ կոդով)	պարտադիր	պարտադիր
14.	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր
15.	պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը
16.	փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն):
17.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին:
18.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը

			(մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից:
	վճարողի կնիքը	պարտադիր	ոչ պարտադիր
19.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր
	շահառուի կնիքը	պարտադիր	ոչ պարտադիր
20.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր
	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	չի լրացվում
21.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
22.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորված գումարը	պարտադիր	պարտադիր այս դաշտը լրացվում է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից, որտեղ նշվում է այն գումարը, որը փաստացի գանձվել է վճարողի հաշվից, ինչպես նաև նշվում է արժույթը
23.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի ակցեպտավորման ամսաթիվը, ժամը, րոպեն